

## ԳՐԱԿԱՆ

**ԵՐԳԻԾԱԿԱՆԸ ԵՒ ՈՂՔԵՐԳԱԿԱՆԸ ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆԻ  
«ԸՆԿԵՐ Բ. ՓԱՆՉՈՒՆԻ» ՎԵՊՈՒՄ**

Դ

Սկիզբը թիւ 4-5-6-ում

Փանջունու բնաւորութեան, նրա անհատական եւ ընդհանուր յատկանիշների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար այսպիսի վերլուծութիւնն անհրաժեշտ էր. այլապէս նուազ հասկանալի պիտի լինէր նրա ծապլվարեան ու վասպուրականեան գործունեութիւնը, որը ներկայացուած է նամակներում: Նուազ հասկանալի պիտի լինէր նաև Փանջունու տիպը՝ իրքեւ երեւոյթի մարմնաւորում:

Նամականու խոշորագոյն վարպետն է Օտեանը մեր գրականութեան մէջ: Գրական այդ ձեւը նա օգտագործել է "Պատերազմ" եւ խաղաղութիւն", "Վանառականի մը նամակները կամ կատարեալ մարդ ըլլալու արուեստը", եւ "Ընկ. Բ. Փանջունի" երկերը գրելիս: "Վանառականի մը նամակների" առաջարանում գրական այդ տեսակի վերաբերեալ, Օտեանն ունի շատ հետաքրքիր բնորոշում: Այնտեղ՝ նամակներում է, որ հերոսն իր ողջ ներաշխարհը, իր մարդկային էռութիւնը դրսեւորում է անսփոյ մերկութեամբ: Այդպէս են Գոզմա Դամիանոսան-Դամիսունին՝ "Վանառականի մը նամակներում", "Պատերազմ" եւ խաղաղութիւն" վիպակի Սիմոնն ու Յովաննը, այդպէս է նաև Ծապլվարի հերոսը՝ Փանջունին: Ծապլվարեան նամակները շարադրուած են "Լուրջ քաներու մասին" թերեւորէն, թերեւ քաներու մասին՝ լրջօրէն" օտեանական սկզբունքով: Ահա ինչու այնտեղ իրականը ծիծաղելի է եւ ծիծաղելին՝ ողբերգական: Օտեանը ինքը Փանջունու նամակներն այսպէս է որակել. "Եթէ այս նամակները իրքեւ երգիծական գրուածք մը կարդացուին, յանցանքը ապահովարար

գրողինը չէ, քանզի բուն հեղինակը ամրակուու սկզբունքներով շաղախուած թունդ հաւատացեալ հայ ընկերվարական յեղափոխական մըն է, լրջութեան ծայրագոյն սահմաններն հասած ու հոն պատնիշացած" (30): Իր ծիծաղելի արարքներին, այն, Փանջունին վերաբերում է դոնիշիշուեան լրջութեամբ, դրա համար էլ նրանց հետեւանքները ողբերգական են, իսկ Փանջունին ինքը՝ եւ ծիծաղելի, եւ կատարեալ պատուհաս:

Առաջին նամակում նա կենտրոնին տեղեկութիւններ է հաղորդում ընդամենը 20 տուն ունեցող Ծապլվարի մասին, որը, նրա կարծիքով, յեղափոխական գործունեութեան "յարմարագոյն" վայր է: Գիւղացիներն ապրում են քարեկեցիկ կեանքով, ժիր ու աշխատող մարդիկ են, հաշտ ու համերաշխ: Միայն երբեմն նրանք տուժել են հարեւան Քոմրաշ գիւղի քրդերի յարձակումներից: Նրանք ապրում են գրեթէ մէկ ընտանիքի պէս եւ այդպէս էլ հաւանարար կ'ապրէին, եթէ այնտեղ շայտնուէր ու իր "եռանդուն գործունեութիւնը" չսկսէր Փանջունին: Ծիծաղելին այն է, որ Փանջունին, նանաչելով գիւղը, նրա մարդկանց կապերն ու յարաբերութիւնները, չունի իրականութեան զգացողութիւն, իր կիսասպատ իրացրած յեղափոխական տեսութիւնը զանում է կիրառել մի վայրում, ուր ո՛չ դրա կարիքը կար, ո՛չ էլ դրա իրականացման համար նպաստաւոր պայմաններ ու անհրաժեշտ նախադրեալներ: Փակ բնաւոտեսութեան շրջանում գտնուող Ծապլվարի փոքրիկ համայնքում գրեթէ բոլորը հաւասար էին, ուստի բնականարար պիտի չունենային շահագործող ու շահագործուող դասերի

բաժանման գիտակցութիւն, առաւել եւս՝ գաղափա՞ր իսկ պիտի չունենային "կապիտալիզմի գործած ռնիրների", քանուորական սինդիկատների անհրաժեշտութեան եւ պրօլետարիատի պահանջմերի մասին: Փանջունին իր գործն է համարում կատարել ահա այդ բաժանումները եւ հակամարտ դասերի միջեւ ծաւալել յեղափոխական պայքար՝ անորոշ նպատակներով: Ակնյայտ է, որ Փանջունու գլուխը խցկուած յեղափոխական տեսութիւններն ու ընկերվարական գաղափարները չեն բխում հայ կեանքի տրամարանութիւնից, նրա զարգացման օրինաչափութիւններից, հայ հասարակութեան կառուցուածքի եւ նրա նպատակների հետ որեւէ առնչութիւն չունեն: Սկզբից եւեր հերոսի ու միջավայրի միջեւ ծագում է սուր հակասութիւն, որն ամեն բայլափոխում վերածում է դրութեան "կօմիզմի". Փանջունին բնութագրում է արտաքուստ շատ լուրջ, բայց ըստ էռութեան ծիծաղելի արարքներով: Դրանցից իւրաքանչիւրը մի անուղղելի սխալ է, արտատրամարանական ու անդրմտային մի գործողութիւն, որն աւելի խորացնում է արհեստականօրէն ստեղծուած հակասութիւնները, մարդկութեանը բերում նորանոր չարիքները: Նազարէթ Պերպէրեանն իրաւունք ունէր ասելու, թէ "Ընկեր Փանջունիով ձեւ ու շունչ կ'առնէր հայ յեղափոխականի ժխտական տիպարը, որուն միջոցով երգիծանքի ու փետրաթափումի թիրախ կը դառնար տոկմատիք ընկերվարականը՝ ան, որ գրքերէն ու մտածումներէն կը մտնէ կեանքի ասպարէզ եւ նկատի չունի այն միջավայրն ու ժամանակը, ուր կոչուած է գործելու" (13): Բայց այդպէս էին գրեթէ բոլոր հայ ընկերվարականները, որոնք, անկախ իրենց կուսակցական պատկանելութիւնից, հաշուի

չառնելով ո՛չ ազգային շահ, ո՛չ պատմական զարգացում, ո՛չ ազգային մտածողութիւն ու հոգերանութիւն, ո՛չ հասարակական ու քաղաքական պայմաններ՝ հայ ժողովրդին առաջնորդում էին դեպի ընկերվարութիւն ու համաշխարհային յեղափոխութիւն՝ այդ անիրագործելի նպատակին զոհարերելով նրա քաղաքական անկախութիւնը եւ անգամ պատմական հայրենիքը՝ նրա դարաւոր ոսոյի հետ կեղծ եղրայրութեան ու սուտ ինտերնացիոնալիզմի անամօք բարողներով:

Որ Փանջունիների գործունեութիւնը աղետ էր թերելու հայ ժողովրդին, Օտեանը վաղուց էր նկատել: Ընկերվարական գաղափարները փանջունիների միջոցով գործադրելու հետեւանքները նա հանճարեղօրէն կոահել էր դեռևս 1909 թուին, երբ շարադրում էր ծավալվարեան նամականին: Ցետագայում խորհրդային մամուլի էջերը պիտի ողողուէին ամբողջատիրական սոցիալիզմի, կոլեկտիւացման, վարչահրամայական ու լնացման ժամանակների դեկավարների այնպիսի նառերով ու ելոյթներով, որոնք յար եւ նման են Փանջունու ծավալվարեան ու վասպուրականեան նամակներին, նրա եւ ընկեր Սարսափունու դասախոսութիւններին:

Զկարողացանք պարզել "Ա.Խ." ծածկանունը: Այդ անձնաւորութիւնը, սակայն, 1935 թ. հիմք ունէր Խորհրդային Հայաստանը համեմատելու ծավալրի, իսկ այնտեղի գործիչներին՝ Փանջունիների եւ Խել Աւոների հետ: Եւ իրօք, Ծավալվարում դասակարգային բաժանումներ կատարող Փանջունին ոչնչով չէր տարրերում Հայաստանում կոլեկտիւացում եւ կուլակարգափ իրականացնող խորհրդային պաշտօնեաներից: Երիցս իրաւացի է Ա.Խ.-ն՝ թերելով Ռէս Սերգոյի օրինակը. "Երուանդ Օտեանը, Փանջունին ծաղրելու համար, նրա թերանով յայտարարում է,

(13) "Բագին", 1969, թիւ 11-12, էջ 141:

Ռէս Սերգօն "աղտոտ պուրժուա" է, որովհետեւ ունի "երեք արտ, երկու կով, մէկ էշ եւ երկու այծ" (պակաս է միայն երեսյրի փանցունիական ընկալումն ու գնահատականը՝ "իբրև արդիւնք խեղն անինչք գիւղացիներու վրայ ի գործ դրուած դարաւոր կեղեկումներու" - Ս. Մ.), մտքով անգամ շանցկացնելով, որ աշխարհի մէկ հինգերորդ մասի վրայ հաստատուելու է մի իշխանութիւն, որ յատուկ օրէնք է հրատարակելու, որով "աղտոտ բուրժուա" կամ "կուլակ" է հոչակուելու եւ փանցունիական մեթուներով եւ Խեւ Աւօների միջոցով դասակարգային պայքար է մղելու այն բոլոր գիւղացիների դէմ, որոնք ունեն նիշտ եւ նիշտ այնքան կարողութիւն, որքան ուներ Ռէս Սերգօն" (14):

Ըստ օտարածին տեսութիւնների եւ կենտրոնի հրահանգների՝ Փանջունին ծաղլվարում պէտք է յայտնագործէր նաեւ բուրժուազիայի հետ դաշնակցող կղերականութիւնը: Այն պարզ ու բնական իրողութիւնը, որ գիւղի ծերուկ բահանան՝ Տէր Սահակը, մի քանի անգամ նաշել է Ռէս Սերգոյի տանը, Փանջունին որակում է որպէս "յաւիտենական զինակցութիւնը կապիտալիզմի եւ կղերականութեան" ընդդէմ ընչազուրկ դասակարգին" (33): Ըստ փանցունիական տրամարանութեան՝ Ծաղլվարն անհրաժեշտարար պիտի ունենար եւ "ընչազուրկ" բանուոր դասակարգ եւ հողային պլորիտարիատ: Եւ "միանգամայն երկարագործ" պայտար Մկօն, ծոյլ ու գող Սըմենց Վարդանը այդ կարծեցեալ դասակարգերի միակ անդամներն են: Ծաղլվարն անհրաժեշտարար պիտի ունենար նաեւ հասարակական խաւեր. Փանջունու հնարագիտութեամբ յայտնագործում է նաեւ երիտասարդ մտաւորականութիւն, որի միակ ներկայացուցիչը Խեւ Աւօն է: Միծաղելի է, անշուշտ, դասակարգեր ու խաւեր՝ միակ

ներկայացուցիչներով. այսպիսին է Փանջունու հասարակագիտական պատրաստութիւնը: Ինչպէս տեսնում ենք, այնքան էլ շատ չեն Ծաղլվարի դասակարգերը, դասերն ու խաւերը՝ նոյնիսկ Փանջունու դասակարգումով: Սակայն Լեւոն Հախվերդեանը իր առաջարանում քոյլ է տուել մի վրիպում, որի պատճառով խախտուել է վէպի՛ նրա վերլուծութեան տրամարանական ընթացքը եւ առաջացել խառնաշփոթութիւն: Ահա ինչ է գրել նա. "Խեղն ու կրակ Ռէս Սերգոն հենց շահագործող դասակարգն է եւ նրա տանը գործ անելով մի կտոր հացի տէր դարձող Խեւ Աւօն՝ շահագործուող դասակարգի ներկայացուցիչը" (Առաջարան, էջ 8): Կարելի է եւ պէտք է ընդունել, որ 18ամեայ Խեւ Աւօն, յիմար եւ չարագործ լինելու եւ բազմաթիւ զանցառութիւնների պատճառով վոնդուած էր հայրական տնից. նա նոյնպէս շահագործուող դասից է՝ ըստ Փանջունու, բայց նա վէպում ներկայացնում է ծաղլվարի "գիտակից երիտասարդ մտաւորականութիւնը", եւ ոչ միայն Ռէս Սերգոյի տանը, այլ եւ առ հասարակ որեւէ տեղ չի ծառայել. ո՞վ նրան որեւէ գործ կը վստահէր բացի Փանջունուց: Միայն նա կարող էր Խեւ Աւօյին յորջորջել "կատարեալ ընկերվարական յեղափոխական" եւ նրան կարեւոր դեր վերապահել Ծաղլվարի "յեղափոխական գործօն շարքերում": Փանջունին կարեւորութիւն չի տալիս Խեւ Աւօյի այլանդակ արարքներին. գիւղացիների արդարացի կարծիքը նրա մասին համարում է "միջնադարեան կղերական ոգու" եւ "բուրժուազիական անձուկ ըմբոնումներու" արտայայտութիւն: Կուսակցական աշառութիւնը քոյլ չի տալիս, որ Փանջունին տեսնի իրեն համագործակցողների որեւէ արատն ու քերութիւնը: Ընդհակառակն, նրանք բոլորն էլ, Փանջունու ասելով, "յեղափոխական լաւ խմորից են", իսկ Խեւ Աւօյի կատարեալ

(14) Նոյն տեղում

ընկերվարական յեղափոխական լինելն ապացուցելու համար թերում է հետեւեալ օրինակը: Իրեն փոխադարձ այցելութեան եկած քոմրաշցի քրդերին պատուասիրելու համար Փանջունին բաւականաչափ կերակուր չուներ: Խնդիրը "լուծում" է Խել Աւօն՝ Ռէս Սերգոյի պարտեզից, բոլոր տնեցիների ներկայութեամբ, գողաճալով երկու հաւ այնպիսի նարպկութեամբ, որ նոյնիսկ քրդերին զարմանք էր պատճառել: Աւօյի այս արարքին Փանջունու տուած գնահատականը առաւել բան խօսուն է. "իսկ ես կը մտածէի որ վերջապէս դարաւոր հարստահարեալն էր որ կ'ընդվզէր եւ գործնականապէս կը ջանար տիրելու իր իրաւութին(40):

Հակառակ Լ. Հախվերդեանի կարծիքին Ռէս Սերգոյի տանը գործ անելով մի կտոր հաց վաստակողը ոչ թէ Խել Աւօն է, այլ Սմենց Վարդանը, որին վոնտել է Սերգօն ծուլութեան եւ գործութեան համար: Փանջունու Գ. Ամակում ե՛ւ այս իրական փաստն է արձանագրում, ե՛ւ տրում է դրա փանջունիական մեկնարանութիւնը. "Գիտէք, որ Վարդան իրեւ մշակ կը ծառայէր Ռէս Սերգոյի մօտ, եւ որ վերջինը զինք արտախած էր իրեւ ծոյլ եւ անքարոյ, եւ թէ ես անմիջապէս միջամտած էի, պաշտպանելու համար ընչազուրկ պրոխտարիատի իրաւունքները"(43):

Ծապլվարի յեղափոխական շարժերի ամրապնդման համար Փանջունին, դեռ եւս գիտի դպրոցը չացուած, Թտարեկան Կարոյին դարձնում է Ծապլվարի դպրոցական միութեան նախագահ՝ իր գործադիր ժողովով ու ահարեկիչ խմբով: Հետագյում էլ Կարոյի մօր՝ խուլ ու համր ընկերուիի Սառայի միջոցով կազմակերպում է երկու միութիւն՝ ծապլվարի հայ կանանց "Անձնուէր" խումբը եւ "Ցառաչ" ակումբը:

Բնորոշ է, որ "Անձնուէր" խումբը,

որի միակ անդամը նոյն խուլ ու համր ընկերուիի Սառան է, Փանջունին կազմակերպում է մի հրամայողական պահանջից ելնելով. "... մի քանի օրէ ի վեր թանջքէ կը տառապէի եւ պէտք ունեէի մի անձնուէր կնոց խնամքին"(74):

Այսպիսով, իր գլխաւոր խնդիրներից մէկը Փանջունին լուծել էր փաստօրէն. Առ Ծապլվարը բաժանել էր երկու հաւասարագոր թշնամի բանակների, եւ դա համարում էր "աչքի ընկնող յաղքանակ": Մի պահ, միայն մի պահ կարող է ծիծաղելի բուալ նրա յաղքական արարքը, որով պարծենում էր ինքնագոհ մեծամոլութեամբ. "Եւ խորի՞լ թէ վեց ամիս առաջ Ծապլվարի մէջ գոյութիւն չունեէն ո՛չ պուրժուազիա, ո՛չ ագրարային կապիտալիզմ, ո՛չ հողային բանտրութիւն, ո՛չ գործաւորական դասակարգ, ո՛չ պրոլետարիատ, ո՛չ գիտակից մտաւորականութիւն, ո՛չ ուսացիա, ո՛չ կղերական մութ ուժեր, վերջապէս ոչինչ: Ու այդ տգետ գիտացիները մեղապարտ հանդարտութեամբ միասին կ'ապրէն, առանց նշանակելու զիրենք բաժանող անանցանելի իրամատները, իրենց ընդդիմադիր շահերը եւ ամէն գնով պայքար մղելու հրամայողական պահանջքը"(95):

Ա.յ'ն, երգիծական տարբեր միջոցներով ու հնարանքներով ծաղրում է ընկերվարական Փանջունին, բայց նրա խիապէս ծիծաղելի արարքները դառնում են անխուսափելի ողբերգութեան ու անդառնալի կորուստների պատճառ:

Փանջունին ընդհաններացուած գեղարուեստական կերպար է. Օտեանի հեղինակային հաւաստումներով չը բաւարարութղ ընթերցողը կարող է նկատել, որ նա Ծապլվարում ու Վասպուրականում գործում է գլխաւորապէս կուսակցական կինտրոնի թելադրանեով, կատարում է կուսակցական առաւել մեծ "ընկերների"

իրահանգները, արժանանում նրանց խրախուսանքին ու քաջալերութեանը: Եւ նամակում Փանջունին գրում է. "Սիրելի ընկերներ, ստացայ ձեր նամակն ու ձեր տուած հրահանգները: Իմ ալ աշխարհայեցքս բոլորովին նման է ձերինին" (62): Այսինքն՝ Փանջունին իրականացնում է կուսակցական կենտրոնի ու ողջ կուսակցութեան գործելակերպն ու վարքագիծը: Նա սկզբում ուզում է տանել միայն գաղափարական յաղթանակներ, յեղափոխական շարժում առաջ բերել իր իսկ կողմից Ծաղլվարում յօրինուած ընդդիմադիր "դասակարգերի" միջեւ՝ մերժելով բոլոր հաշտարար առաջարկները, խորացնելով թշնամանքը նրանց միջեւ: Ուղղակի խոռվարար է Փանջունին, խառնակիչ, խժդութիւնների հրահրող անհանգիստ մի ուժ, որն իր գործունեութեամբ խարարում է բնականոն կեանքը, խառնշտում մարդկային աւանդական յարաբերութիւնները, չարախնդալով ծաղրում ամեն խելամիտ խօսք: Ուստի Սերգօն ու Տէր Սահակը գլուխ չեն հանում այդ յեղափոխական փորձանքից ու աննպատակ պայքարի փուչ ասպետից. "Մենք ամենքս ալ հայ ենք, եղբայր ենք, ինչո՞ւ սիրով չապրինք իրարու հետ, ինչո՞ւ կոփու ընենք, - կը կրկներ այդ կեղտոտ պուրծուան որ չեր կարող ըմբռնել, թէ կեանքի եական պայմանն էր կոփուր, թէ դասակարգային պայքարը անհրաժեշտ էր ընկերվարութեան յաղթանակին համար, եւ թէ առանց արիւնահեղութեան կարելի չէ մի լաւ բան դուրս բերել" (78):

Հայ իրականութեան մէջ, որոշ ազնիւ մոլորեալների բացառութիւնը չհաշուած, ընկերվարական գաղափարները գործնականի վերածող փանջունինները պարզապէս գործել են իրենց ժողովրդի դէմ: Իսկ ի՞նչն էր նրանց մղում այդպիսի ազգադաւ արարքների. այն կեղծ

գաղափարը, թէ իրենք այդպիսով մարտնչում են համայն մարդկութեան բարօրութեան ու երջանկութեան համար եւ իրականացնում են պատմական վսիմ առաքելութիւն: Այնպէս որ՝ պատահական չէ վեպի առաջին մասի "Առաքելութիւն մը ի Ծաղլվար" վերնագիրը: Այն, որ ընկերվարութեան գաղափարախօսները, մասնաւորապէս Գոլութեւը, մարդկութիւնը բաժանում էին ոչ թէ ըստ ազգութիւնների, այլ ըստ դասակարգային պատկանելութեան, ուղղուած էր փոքրաբիւ ժողովուրդների եւ ազգութիւնների դէմ: Դասակարգային պայքարը շրջանցում եւ անտեսում էր ազգային հարցը եւ պիտի ծառայէր խոշոր տէրութիւնների շահերին: Ծաղլվարի հերոսը նոյնպէս գործում է ոչ թէ ազգային տարբերութիւնների, այլ դասակարգային ընդհանրութիւնների սկզբունքով: Այս տրամարանութեամբ է նա նոյնացնում քուրդ Հասոյին եւ հայ Վարդանին: Նոյն այս տրամարանութեամբ է Փանջունին քրդական Քոմրաշ գիւղում հիմնում "Կարլ Մարքս" կլուրը, որի ֆարտուղար նշանակում է աւազակ Հասոյին: Վերջինիս նա ընդգրկել էր նաև Ծաղլվարի յեղափոխական շարժման մէջ՝ իրեւ գաղափարական կուի առաջամարտիկ: Ծաղլվար եկած թուրք յիսնապետը ձերբակալում է այդ "Վաղեմի չարագործին", սակայն Փանջունին փորձում է իր ընկերվարական տեսութիւններով յեղափոխել յիսնապետին ու ոստիկանին եւ ազատել իր ընկերոջը, Քոմրաշ գիւղի պատգամաւոր ներկայացուցին: Տեսնենք՝ ինչպէս էր Փանջունին համոզում յիսնապետին. "Ինք քուրդ, դուք հայ, ձեր գործերուն ինչո՞ւ կը խառնուի, դպրոցը ո՞ւր, Հասոն՝ ո՞ւր. նա մի պարզ աւազակ է - կ'ըսէր յիսնապետը:

"Պատասխանեցի իրեն թէ էխսիրովիրացիայի մասին չէի գիտեր ընկեր Հասոյի հայեցակետը, բայց թէ նա

բուրդ լինելով իրաւունք չուներ միջամտելու հայերու գործին՝ դա մի անընդունելի գաղափար էր: Բացատրեցի իրեն, թէ Վասիլի Գօլուբեևի տեսութիւնը ցեղային զանազանութիւններու արուեստական բաժանմունքներու մասին եւ ցոյց տուի թէ մարդկային ընկերութիւնը ոչ թէ զանազան ազգութիւններու կը բաժնուի՝ այլ որոշ դասակարգերու, եւ թէ այս տեսութիւնը ընկեր Հասօ, իրեւ պրոլետարիատ, կը նոյնանար Խել Աւոյի եւ Սմենց Վարդանի հետ: Բոլոր այս փաստացի ապացոյցներն անօգուտ եղան եւ Հասօ տարուեցաւ Արարկիր, ուր բանտարկուած կը մնայ" (88-89):

Կարող է թիւր տպաւորութիւն ստեղծուել, թէ Փանջունին ապազգային տիպ է եւ նրա համար բոլոր ազգերը հաւասարապէս սիրելի կամ ատելի են, կամ պարզապէս նա անտարբեր է բոլորի նկատմամբ: Այդպէս չէ, սակայն: Վեպի տարբեր դրուագներում նա բացէ ի բաց արտայայտում է իր կողմնակալ վերաբերմունքը քրդերի, եզիդիների, քուրքերի, քղթաշների, շաւի արաբների նկատմամբ: Այսպէս, քրդերին նա համարում է ընկերվարական յեղափոխութեան բնական նեցուկները, հզօր նկարագրի տէր մարդիկ, որոնք կարող են նպաստել փանջունիների բարոզած սկզբունքների յաղքանակին: Տեսէ՞ թ. նամակում նա ինչպիսի՝ հիացմունքով է արտայայտում քրդերի մասին. "Քոմրաշ գիւղի քրդերը լաւ ընդունելութիւն ըրին ինձ. չորս օր մնացի իրենց մօտ եւ տեսայ որ լաւ տրամադրութիւններով լարուած են: Եխրորդիացիայի տեսութիւններս շատ աւելի դիւրաւ ըմբռնեցին քան մեր ապուշ ծապլվարցիք: Պատրաստակամութիւն յայտնեցին անմիջապէս գործնական հոդի վրայ դնելու հարուստ պուրժուագիւղացիայի տեսութիւններու ինչերը բռնի ուժով գրաւելու հարցը" (37): Աս, ինչ խօսք,

լիովին համապատասխանում էր աւարառու քրդերի բնական ճգտումներին, եւ բնականաբար նրանք պիտի դառնային Փանջունու բարոզած ընկերվարութեան չերմ կողմնակիցներ ու ջատագովներ:

Փանջունուն չեն ել խրաչեցնում քոմրաշցի քրդերի՝ ծապլվարցիներին ներկայացրած պահանջները. ընդհակառակն, երբ բանտարկուած Հասոյի դիմաց նրանք հայերից պահանջում են 40 ուկու դրամական փոխհատուցում, Փանջունին դա համարում է նրանց բնական իրաւունքը եւ ինքն է կազմակերպում յարձակում Ռէս Սերգոյի տան վրայ, որ նրանից խիեն ենթադրեալ ոսկիները եւ վերադարձնեն "օրինական" տէրերին: Կոլոշենց Սեդօն, ի հարկէ, ուներ իր հեռահար նպատակները, բայց ահա Փանջունին իր ելոյթով միանգամայն "արդար" եւ "օրինաւոր" է համարում նրա առաջարկը, որ դրում է "գործնական հոդի վրայ". Ընկեր Սեդօ մի կրակոտ դասախոսութեամբ առաջարկեց անմիջապէս յարձակիլ Ռէս Սերգոյի տան վերայ եւ բռնի վերցնել հոն պահուած դրամները, կեղտոտ պուրժուագիայի այդ անարգ գէնքերը, զանոնք վերադարձնել իրենց օրինաւոր տէրերուն, բաւարարութիւն տալով միանգամայն "Քոմրաշ գիւղի քրդերու պահանջին" (103-104): Փանջունիներին կարող է հարց առաջադրուել. այդ ո՞ր օրէնքով ու իրաւունքով քրդերը պիտի դառնային հայերի դրամների "օրինական տէրեր": Այդ դէպէում նրանք արդեօք չէի՞ն դառնայ նոյնպիսի "կեղտոտ պուրժուաներ", որոնց դէմ պայքարում էին իրենց: Ի՞նչ է, հայ բուրժուան կեղտո՞տ էր, իսկ քուրդը՝ մաքո՞ւր:

Մի ուրիշ փաստ էլ յիշենք վեպից՝ ազգերի հաւասարութիւն ու համերաշխութիւն բարոզող Փանջունու իրական դէմքը պարզելու համար. երբ Ծապլվարի բնականոն կեանքը խառնշտորող Փանջունուն ու

Երա ապիկար կուսակիցներին, որոնք պատճեշուել էին գիւղի նորակառոյց դպրոցում եւ առաջադրում էին անկարելի պահանջներ, հայերը՝ Ռէս Սերգօս ու Տէր Սահակն էին առաջարկում խաղաղութեամբ դուրս գալ եւ բարութեամբ համաձայնել՝ առանց բուրք կառավարութեանը դիմելու, Փանջունին միանշանակ յայտարարում էր, թէ իրենք պիտի տեղի տան "միայն բռնի ուժի առաջ": Երբ իրենց հարկադիր պահանջով Ծաղկար են ժամանում բուրք յիսնապետն ու ոստիկանը, նրանք անմիջապէս բողնում են դպրոցի շենքը. "Մենք ի հարկէ ընդդիմութիւն ցոյց չտուինք մեր բուրք եղբայրներուն, սիրալիր կերպով ընդունեցինք զիրենք ու անմիջապէս դուրս ելանք դպրոցէն ու վերադարձանք մեր տուները" (67):

Խոկ հիմա տեսնենք, թէ բրդերի ու բուրքերի հանդէպ այսքան սիրալիր ու եղբայրաբար տրամադրուած Փանջունին ինչպիսի վերաբերմունք ունի իր ազգակից հայերի նկատմամբ: Վասպուրականում "ազգային վերաշինութեան գործին լծուած" Փանջունին ու Սարսափունին մի դիւային հնարագիտութեամբ յայտնագործում են Պոլսի եւ գաւառի հակադրութիւնը եւ իրենց հրապարակային դասախոսութիւններով շանում են վասպուրականցիների մէջ բուռն ատելութիւն բորբոքել պոլսեցիների հանդէպ: "Պոլիսը Գաւառին դէմ" թեմայով դասախոսութեան մէջ Սարսափունին գաւառացիներին կոչ էր անում շախչախել դաւանան պոլսահայերի անարգ գլուխները", որպէս զի նրանք չկարողանան քանդել գաւառացիների օջախները եւ վերջիններիս վիզն ու ոտքերը շղթայ անցկացնելով՝ ստրկութեան վաճառեն արար թեղուիններին: Սրանից աւելի անհերերէր Փանջունու դասախոսութիւնը: Իր այդ անդրմտային զառանցքով պարծեցող Փանջունին տրտինգային ոգեւորութեամբ

գրում է կենտրոնին. "Այս դասախոսութեամբ ես պարզեցի սա նշմարտութիւնը թէ՝ Պոլսի յետադիմական շարժումը կատարուած է հայ պուրժուաներու ձեռքով, թէ մեր բուրք կամ քուրդ եղբայրները ոչ մի մասնակցութիւն չեն ունեցած Երա մէջ, թէ հայ դաւանան հարուստներն են որ դրամական օգնութիւն ըրած են շէյխ Վահտերիի, որպէս զի նա կարող ըլլայ "Վոլքան" թերթը հրատարակել, թէ մարտ 31ին Այս Սոֆիայի հրապարակը հաւաքուած փաթբոցաւրներէն շատերը ծպտուած հայեր էին, եւ վերջապէս Թուրքիոյ ազգաբանական մէջ միակ յետադիմական եւ համիդական տարրը հայերէ կը բաղկանայ, որոնց գլուխը հարկ է շախչախել" (138):

Կենտրոնի ցուցումներով գործող ընկերվարական Փանջունին ու Սարսափունին իրենց այսօրինակ դասախոսութիւններով "հիմնաւորում" են, որ Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայկական տարածքներում միակ յետադիմական, հակասահմանադրական տարրը հայն է, այն, "գաղափարական անհաջող թշնամին", որի դէմ պէտք է մդիլ յեղափոխական անողոք պայքար, շախչախել նրան, որպէս զի ընկերվարութիւնը յաղթանակի: Սհա ինչպէս են փանջունիները լծուել իրենց պատկերացրած "ազգային վերածնութեան" փրկարար գործին: Եւ դա զուտ հայկական երեւոյք չէ:

Այն, որ ընկերվարութեան գաղափարախոսները, մասնաւորապէս Վ. Գօլուբելը, մարդկութիւնը տեսակաւորում էին ոչ թէ ըստ ազգութիւնների, այլ ըստ դասակարգային պատկանելութեան, իսկապէս ուղղուած էր փոքր ժողովուրդների եւ ազգութիւնների դէմ: Մեծ տէրութիւններն ու ժողովուրդները չունեին եւ չունեն հայրենիք կորցնելու կամ բնաշնչուելու այնպիսի վտանգ, ինչպիսին տեսան հայերը բուրքական եւ խորհրդային կայսերապե-

տուրիւններում։ Եղբայրութեան, ազատութեան ու հաւասարութեան կարգախօսներով իշխանութիւն նուանած երիտրուրքերը հայերի ցեղասպանութիւնը կազմակերպելիս հրամայել էին բնաշնչել ու վերացնել ոչ թէ այս կամ այն դասակարգը, այլ հայ ազգաբնակչութեանը՝ օրօրոցի երեխաններից մինչեւ զառամեալ ծերունիները։ Խորհրդային քուրքերը, որոնց դեկավարները կոմունիստներ էին, նախիչեւանից բռնի ուժով արտախսցին ոչ թէ իրենց դասակարգային թշնամուն, այլ հայերին, որոնք օրինական զաւակներն էին իրենց պատմական հայրենիքի։ Սումգայիքում, Կիրովարադում, Բաքում եւ Ազգերայշանին բռնակցած հայկական վայրերում կազմակերպուած ու շարունակուող հայերի ջարդն ու բռնի տեղահանութիւնը կատարուում է ոչ թէ ըստ դասակարգային, այլ ազգային պատկանելութեան հանգամանքի։ Ընկերվարութեան ջատագովների համար դասակարգային պայքարը իշխանութիւն նուանելու միակ հնարաւորութիւնն էր։ Իսկ դասակարգային պայքարը շրջանցնում էր ազգային հարցը եւ օրմեկտիւրէն ծառայում էր խոշոր տէրութիւնների շահերին՝ կորուստներ ու դժբախտութիւններ պատճառելով փոքրաբի ժողովուրդներին։ Ինչո՞ւ յեղափոխական շարժումը ներոպայից տեղափոխուեց Ռուսաստան։ որովհետեւ ոռուական միապետութեան եւ ոռուական կապիտալի տապալումը ձեռնտու էր երոպական տէրութիւններին, յատկապէս Գերմանիային։ Այլապէս ինչո՞վ քացատրել դարասկիզբին ծագած պատերազմներում Ռուսաստանի պարտուելու անհրաժեշտութեան այն թեզիսները, քարոզներն ու կոչերը, որ մողոնել էին մեծամասնական ընկերվարականները։

Ռուս-նապոնական, ինչպէս եւ համաշխարհային առաջին պատերազմում Ռուսաստանի պարտութեան, ոռուական

բանակը կազմալուծելու եւ դասակութեան մեծամասնական կոչերը, որոնք խորհրդային պատմագրութիւնը բմրկահարել ու փառարանել է որպէս իսկական հայրենասիրութիւն, կատարեալ փանջունիութիւն է։ Դրա պատմական դառն փորձը նաև մենք՝ հայերս ունենք՝ բազմաբի օրինակներով։ մեր երկրի ու ժողովրդի իրական հոգսերը քողած՝ ընկերվարութեանն ու համաշխարհային յեղափոխութեանը զինուորագրուելը, Հայաստանը նուանելու եւ արեւելահայութեանը նոյնպէս բնաշնչելու եկած քուրք ջարդարանների դեմ կոռուպ հայոց բանակի շարքերում դասակութիւն կազմակերպելն ու մայիսեան չարարաստիկ ապստամբութիւնը բարձրացնելով նրան թիկունիցից հարուածելը, Կարս քաղաքը առանց դիմադրութեան ու կրակոցի քուրքերին յանձնելը, 1920 թ. Սեպտեմբերին Ալեքսանդրապոլում յեղիում ստեղծելն ու Անկարայի կառավարութեանը հեռագրով հրաւիրելը, նոյն ժամանակ Բաքուի սովորի՝ հայ զինուորաներին ուղղած խայտառակ կոչը՝ "յեղափոխական" քուրք ասկերներ տեսնելիս զենքը գցելու եւ փախչելու կամ Հայաստանը "իմպիրիալիզմի լծից ազատագրելու" եկած քուրքերին աղ ու հացով դիմաւորելու յորդորներով, որի տակ Ընկեր Փանջունու անունից ստորագրել են հայ պօլշեւիկները։

Հետեւանքը եղաւ առաւել քան ողբերգական ոռուական զենքով զինուած քուրքերը Երեւանի վրայ շարժուելու սպառնալիքի եւ "Ինտերնացիոնալի" հաշիւնների տակ ստորագրուեց Ալեքսանդրապոլի կողոպտչական պայմանագիրը, որով Թուրքիային ու նոր-Անոր ձեւաւորուող Ազգերպայշանին նուիրաբերուեցին հայոց պատմական տարածքները։ Ճիշտ այդպէս էր Ընկեր Փանջունին հնչեցնում "Ինտերնացիոնալը" Ծաղկարի փողոցներում, հայկական

բարեկեցիկ մի գիւղ, որի համար մահերգ դարձաւ հին աշխարհը մինչեւ հիմքերը քանդելու, նորտութիւնը, մերկութիւնը վերացնելու, խուալական նոր աշխարհ կառուցելու բարձր գաղափարը մարմնաւորող խարուսիկ բայլերգը:

Ինչպէս տեսնում ենք, Օտեանի կերտած պատկերներն ու կերպարները ոչ միայն նշմարտացիօրէն արտացոլում են ժամանակի դեպքերն ու իրադարձութիւնները, այլև ունեն հեռահար ազդեցութեան ուժ, եւ նշմարիտ են նաև հետագայ ժամանակների համար։ Ինչպէս Մալլվարում եւ Վասպուրականում, այնպէս էլ հետագայում եղել են իրական Փանջունիներ, որոնք կենտրոնի քելադրանեռվ գործել են ընդդեմ իրենց ժողովրդի։ Խսկ կենտրոնին ձեռնտու է եղել, որ իր կուսակցութիւնը կազմուած լինի գերազանցապէս Փանջունիներից, Սարսափունիներից, Խեւ Աւոներից, Աւսու Նուրիշան եաններից ու Գեորգ Արաբեկեաններից, Ամատունիներից ու Մուլդրոսիններից։ Այլապէս ինչո՞վ բացատրել այն իրողութիւնը, որ կենտրոնը իր համհարգներով, իր մամլիչ իշխանութիւններով ուղակի հաշուեարդար տեսաւ, տեսորի ու ռեպրեսիաների ենթակեց, մահապատճեց ու ախորեց այն հայ կոմունիստներին, որոնք ունեին ազգային նկարագիր ու մտածողութիւն, հայրենասիրութեան "ախտանիշներ" եւ անկարելի ժամանակներում ու պայմաններում ջանացել էին որեւէ ազգօգուտ գործ կատարել։ Մօտիկ անցեալի մեր պատմութեան էշերը լիքն են այդպիսի դեկապարների, գրողների, գիտնականների, մանկավարժների, հրապարակախօսների պայծառ անուններով, որոնք դարձան

ամրողատիրական ընկերվարութեան, Փանջունիների ու Խեւ Աւոների գոհերը։

Ընկերվարութեան հայ փանջունի տեսարանները երբէք իրենց հարց չեն տուել, թէ ինչո՞ւ լենինն ու իր կուսակցութիւնը, նրան յաջորդած դեկապարները այդպէս էլ բաղաբական գնահատական չտուեցին ու չեն տալիս թուրքերի եւ ազերիների իրագործած հայկական ջարդերին, ինչո՞ւ էր խորհրդային պատմագրութիւնը կեղծում փաստերը, ժողովրդից քացնում նշմարտութիւնը հայերի ցեղասպանութեան մասին, վարկարեկում կամ լուրեան մատնում հայ ազգային-ազատագրական պայքարի հերոսներին։ Այս հարցերին մեր մամուլը միայն վերջերս է անդրադարձել։(15)

Սոցիալիստական շարժման առաջնորդները թէեւ դրական վերաբերմունք ունեին ննջուած ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ եւ այն համարում էին ընդհանուր յեղափոխական շարժման բաղկացուցիչ մասը, սակայն այդ վերաբերմունքը դրական էր այն չափով, որքանով այն կարող էր նպաստել կապիտալիստական համակարգի տապալմանը։ Խսկ աշխարհը յեղափոխելու իրենց ծրագրի իրագործումը բացառապէս կապում էին դասակարգային պայքարի եւ նրանով պայմանաւորուած յեղափոխութեան հետ։ Ինչո՞ւ միջազգային յեղափոխական շարժումը ամէն ջանք գործադրեց, որ Ռուսաստանը պարտուի Ճապոնիայի, Գերմանիայի ու Աւստրո-Հունգարիայի դէմ միջած պատերազմներում եւ բոլորովին այլ վերաբերմունք դրսեւորեց թուրքական

(15) Նկատի ունենք Ա. Սարգսեանի "Ինչո՞ւ էնգելսը մերժեց Ցովսէփ Արաբեկեանին", Ռ. Խուրշուղեանի "Ինչո՞ւ էր լուս Լենինը", Բ. Ռուսարեանի "Փետրուարեան խոռվութիւն", թէ ժողովրդական ապստամբութիւն", էղ. Զօհրապեանի "Հայ-թուրքական պատերազմը եւ նրա հետեւանքները" եւ այլ յօդուածներ ու ուսումնասիրութիւններ։

բռնատիրական կայսրութեան նկատմամբ։ Մի՞քէ բուրքիայի վարչակարգն աւելի առաջադիմական էր, քան Ռուսաստանինը, թէ՞ բուրք կառավարողներն աւելի մարդասեր էին ոռւս իշխանաւորներից։ Սնանկ են այն պնդումները, թէ յետամնաց Թուրքիայում չկային յեղափոխութեան համար նպաստաւոր պայմաններ. այդ դեպքում ինչո՞ւ էր երկիրը յորչօրջում "յեղափոխական Թուրքիա"։ Այնտեղ էլ կար յեղափոխական իրադրութիւն, ծաւալուել էր բուրքական բռնատիրութեան նիրաններում տառապող քրիստոնեայ ժողովուրդների եւ ազգային փոքրամասնութիւնների ազգային-ազատագրական պայքար, այսինքն՝ կային ազգային յեղափոխական շարժումներ։ Բայց այդ պայքարը յաղթանակով աւարտուելու դեպքում ծնունդ պիտի տար բռնակալութեան լից ազատագրուած ժողովուրդների նոր ազգային պետութիւնների, ինչպէս որ եղել էր օսմանեան կայսրութիւնը քայլայող

### (Չարունակելի)

նախորդ պատերազմների ժամանակակից դա կը նշանակէր ընկերվարական գաղափարաբանութեան պարտութիւն։ Ահա ինչու ընկերվարութեան գաղափարական առաջնորդները հանդէս եկան ցարիզմի տապալման քաղաքական ծրագրով եւ Թուրքիայի շահերի պաշտպանութեամբ։ Պատմութեան գգրոցներից, անմատչելի արխիւններից աստիճանաբար յայտնաբերում են նորանոր փաստեր ու վաւերագրեր, որոնք պարզում են մեր ժողովրդի ծանր ողբերգութեան պատճառներն ու ակունքները, որոնց մօտ կանգնած էին նաև, դժբախտաբար ո՛չ հայեցողական դերով, հայ փանջունները՝ Հայաստանը եւ հայ ժողովրդի շահերը յանուն համաշխարհային յեղափոխութեան գոհարերելու ստոր պատրաստակամութեամբ։

Ամենատես Օտեանի աչքից չեր կարող վրիպել այս ցաւալի իրողութիւնը։

### ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ